ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը պատմության դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Հայոց պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Մարգարիտա Գաբրիելյան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Վարդանիձորի միջն. դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….…… 2

Պատմության ուսուցման տեղը և դերը հանրակրթության մեջ …….……... 4

Ընդհանուր ակնարկ ուսուցման մեթոդների մասին: Ուսուցման մեթոդների դասակարգումը ……...……..10

Ժամանակակից մեթոդների կիրառումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում: Ժամանակակից մեթոդների կիրառմամբ դասերի օրինակ ……... 11

Դասի պլանի օրինակ …….. 15

Եզրակացություններ ……..……. 17

Օգտագործած գրականության ցանկ ……..……..… 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել: Դպրոցը եղել է մեր ժողովրդի քաղաքական և ազգային գոյատևման պատնեշը և առաջընթացի գրավականը: Այսօր պետական և ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի ապահովումը, միջազգային ասպարեզում մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում մանկավարժական կրթության համակարգի շարունակական բարեփոխումների համատեքստում առանձնակի կարևորվում է անձի ձևավորման և զարգացման գործում պատմության՝ անփոխարինելի դերակատարություն ունեցող դասավանդման հարցը: Հատկապես կարևորվում է ժամանակի թելադրանքին համապատասխան մանկավարժական մոտեցումների կիրառումը և դրան համապատասխան գործիքակազմի մշակումը: Սակայն նմանատիպ հիմնախնդրի տեսական և գործնական անբավարար հակվածությունն էապես բարդացնում է պատմության հաջող դասի կազմակերպումը: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված է խնդրի ուսումնասիրման **արդիականությունը**:

Պատմության ուսուցումը դպրոցում հարուստ ավանդույթներ ունի: Այն ենթադրում է ակտիվ ճանաչողական գործունեություն, որը նպաստում է աշակերտների մտավոր, ստեղծագործական հմտությունների զարգացմանը:

Պատմության ուսուցման ժամանակ գիտելիքի գլխավոր աղբյուր է հանդիսանում խոսքը, այդ պատճառով էլ ուսուցչի խոսքը աշակերտների համար պետք է լինի օրինակելի, պարզ ու հստակ: Ընկալման արդյունավետության վրա մեծ ազդեցություն է գործում նյութի ներկայացման տեմպը, ձայնի տոնը, արտահայտչականությունը, զգացմունքայնությունը և այլն: Բայց ուսուցչի հաղորդած ուսումնական նյութը որքան էլ կարևոր ու հետաքրքրիր լինի, առաջացնում է հոգնածություն ու ուշադրության թուլացում: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում դիմել դիդակտիկական ակտիվացնող միջոցների:

Աշխատանքի **նպատակն է** գտնել, հետազոտել, ստեղծել աշակերտների գիտելիքներին և դասի բովանդակությանը համապատասխան այնպիսի մեթոդներ,

որոնք կլինեն ժամանակին համահունչ և կհեշտացնեն պատմության դասի յուրացումը, կզարգացնեն աշակերտների ստեղծագործական կարողությունները: Այդ նպատակին հասնելու համար մեր առջև դրեցինք հետևյալ **խնդիրները.**

- բացահայտել պատմության ուսուցման տեղը և դերը հանրակրթության մեջ,
- ներկայացնել ուսումնական գործընթացում մեթոդների կիրառման կարևորությունը, մեթոդների դասակարգումը,
- գտնել և վերհանել պատմության դասերի համար առավել արդյունավետ մեթոդներ և հնարներ,
- ներկայացնել ժամանակակից մեթոդների կիրառմամբ պատմության դասի օրինակ:

Հետազոտության **օբյեկտը** միջին դպրոցում պատմության դասավանդման գործընթացն է, իսկ **առարկան՝** պատմության դասավանդման մեթոդական համակարգը:

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են համեմատական, տիպաբանական, վերլուծության ու ընդհանրացման **մեթոդները:**

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատմությունը միշտ եղել և մնում է հանրակրթական դպրոցի հիմնարար դասընթացներից: Պատմության ուսուցման արդյունավետությունը կախված է ուսումնական գործընթացի ղեկավարումից: Պատմության բնագավառում նորագույն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս հանգամանորեն վերլուծել պատմական իրադարձությունները, նպաստում է պատճառահետևանքային կապերի վերլուծությանը, սովորողների հետաքրքրության աճին, ուշադրության կենտրոնացմանը, ապահովվում է աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսին, ստեղծագործական մտածողության և մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը և այլն:

Նպատակն այն կետն է, որին ուսուցիչն պետք է հասնի իր գործունեության միջոցով, այսինքն՝ նպատակը պատասխանում է «Ի՞նչ եմ ես ուզում» հարցին:[1]

Պատմություն առարկայի գլխավոր նպատակը պատմական գիտելիքներով զինված ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է, ինչպես նաև համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, ինքնուրույն դիրքորոշում և գործելակերպ ունեցող ստեղծագործական անհատի և քաղաքացու ձևավորումն է:

Հենվելով այս նպատակներից դպրոցում պատմական կրթության համար առաջնային են համարվում մի քանի խնդիրներ.

- Սովորողներին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր-մշակութային արժեքներին:
- Սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների, գործընթացների, հասկացությունների վերաբերյալ:
- Ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
- Ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում:

[1] Այվազյան Հ.,Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլան կազմման գործընթացում, Երևան, 2014, էջ 15:

- Օգնել հասկանալ պատմական իրադարձությունները, երևույթներ և դասեր քաղել պատմությունից:
- Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստնի պատմական ժառանգության ընկալմանը և այլն:
- Ամբողջացնել և համակարգել հայագիտական առարկաներից սովորողների ստացած գիտելիքները:[2]

Պատմության դասավանդումը նպաստում է աշակերտների լեզվամտածողության զարգացմանը: Այդ իսկ պատճառով առավել արդյունավետ է, երբ դասը ներկայացվում է կենդանի, պարզ, պատկերավոր ու գեղեցիկ լեզվով: Պատմության ուսումնասիրման գլխավոր խնդիրներից մեկը նաև աշակերտների արժեքային համակարգի ձևավորումն է, որն արտահայտվում է նրանց համապատասխան վերաբերմունքի և վարքի միջոցով: Պատմության ուսումնասիրման ընթացքում ծանոթանում են տարբեր ժողովուրդների ու հասարակությունների տնտեսական ու մշակութային կյանքին, քաղաքակրթությանը՝ հնարավորություն են ունենում ծանոթանալ, ճանաչել, ընկալել, իմաստավորել և գնահատել այդ ասպարեզներում ժողովուրդների նվաճումներին:

21-րդ դարում մեծ տարածում գտած գլոբալացման ճանապարհին կորսվում են ազգային արժեքներն ու դիմագիծը, և ամեն ինչ տանում է համաշխարհայնացման (գլոբալիզացիայի), ահա թե ինչու անհարժեշտ է անընդհատ աշակերտների հետ զրուցել, քննարկել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնելով, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել և մենք պարզապես իրավունք չունենք կորցնելու այն, ինչ մեր նախնիները իրենց արյան գնով պահել և մեզ են փոխանցել:

Պատմությունը առաջին հերթին գիտելիք է և կարողություն՝ վերլուծելու սեփական անցյալը, ներկան և պատկերացնելու ապագան:

Հանրակրթական նոր չափորոշչի պարագայում մենք հնարավորություն ունենք էապես ընդլայնելու պատմության դասերին կիրառվող գործիքակազմը, այն դարձնել ճկուն, համապատասխանացնել աշակերտների կարողություններին, ստեղծել նաև գործիքների համակարգ ճանաչողության և ինքնաճանաչողության համար:

[2] Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմություն. Ուսուցչի ձեռնարկ 6-7 դասարան, Երևան, 2013, էջ6-9:

Պատմության դասընթացի բովանդակության ակտիվ յուրացումը ամբողջությամբ կախված է ուսուցչից, նրա պատրաստվածության մակարդակից, ուսուցման կազմակերպան ձևերից ու մեթոդներից, ինչպես նաև ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողների ակտիվ փոխհարաբերություններից: Եթե նախկինում ուսուցիչն էր կրթության բովանդակության հիմնական կրողն ու գիտելիքի հաղորդման գլխավոր աղբյուրը, մանկավարժական գործունեության միակ սուբյեկտը, իսկ աշակերտը որպես ուսումնական գործունեության օբյեկտ, զուրկ ինքնուրույնությունից, ապա մեր օրերում այլևս այդպես չէ: Սովորողը պետք է հանդես գա ուսումնական գործունեության սուբյեկտ, այսինքն՝ ակտիվ, ինքնուրույն գործող ստեղծագործող անձ:[3]

Հայաստանում որակյալ, ներառական, բազմակողմանի, աշակերտների զարգացմանը նպաստող կրթության ապահովվումը մնում է առաջնահերթ և արդիական խնդիր: Առավել նորարական մեթոդների կիրառումը կրթությունն առավել գրավիչ և հետաքրքիր է դարձնում:

Մեթոդիկայի հիմնական խնդիրն սովորեցնելն է, ուսուցչի աշխատանքի կենտրոնացումը ըստ դասարանների և ըստ դասերի: Պատմական նյութի բովանդակությունից ելնելով՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարողությունները, ուսուցիչը ընտրում է դասավանդման ձևեր ու մեթոդներ, հնարներ դասի արդյունավետությունը բարձրացնելու, գիտելիքների հաղորդման ու աշակերտների հեշտ յուրացման համար:

Դասավանդման և ուսումնառության մեջ ժամանակակից, նորովի մեթոդները իրենց հերթին կարող են դժվար ընկալելի լինել սովորողների համար, հատկապես այն աշակերտների որոնք ունեն սովորելու հետ կապված խնդիրներ: Կարևոր է մեթոդի ընտրության հարցում ուսուցչի պատրաստվածության բարձր մակարդակը:

Գործնականում նպատակադրման բոլոր հնարները հիմնված զրույցի կամ երկխոսության վրա, դրա համար էլ անհրաժեշտ է հարցերը ուղղել գրագետ ձևով: Աշակերտին անհրաժեշտ է սովորեցնել նախ լսել հարցը, հետո այն կրկնել իր մտքում, որից հետո նոր միայն բարձրաձայնել ճիշտ/սխալ պատասխանը: Ցանկացած դաս

[3] Նույն տեղում, էջ 6:

ունի իր կառուցվածքը, ըստ այդ կառուցվածքի էլ ուսուցիչը անհրաժեշտաբար ընտրում է դասի յուրաքանչյուր փուլին համապատասխան մեթոդ:

Դասը արդյունավետ կլինի միայն այն դեպքում, եթե դասի բովանդակային մասն ու դրա մեթոդական մասն փոխկապակցված լինեն իրար: Դասին պատրաստվելիս ուսուցիչը կազում է դասի պլան օրինակ, որտեղ ներկայացնում է դասի նպատակը, որոշում դասի տեսակը, մեթոդները, ընտրում և պատրաստում անհրաժեշտ լրացուցիչ նյութեր՝ դիդակտիկան սարքավորումներ, լուսանկար, քարտեզ, աղյուսակ, գծապատկեր, ապլիկացիա և այլն:

Քանի որ տեղեկատվական հոսքը բազմազան է, ուսուցիչը պետք է ավելի շատ աշխատի մասնագիտական առումով, գտնի ինչու չէ նաև ստեղծի մեթոդներ, հնարներ, որպեսզի աշակերտներին լիովին ներգրավվի դասապրոցեսի մեջ: Կարևոր է նաև օգնել աշակերտին զարգացնել իր կարողությունները, հմտությունները, ստեղծագործական ընդունակությունները, արժևորի, իմաստավորի, յուրացնի ազգային արժեհամակարգի տարրերը: Դասը չպետք է լինի կրկնություն ցանակացած դասարանում:

Մեր օրերում պատմություն դասավանդելիս ունենք մեծ խնդիր՝ աշակերտները չունեն հետաքրքրություն առարկայի նկատմամբ, դրանից բխում է մեկ այլ խնդիր ուշադրության անկում, դասին ներգրավածության բացակայություն: Պատմություն դասավանդելիս պետք է արդեն իսկ գոյություն ունեցող, հին, ավանդական մեթոդները վերանայել և նրանց կցել նոր և ավելի արդյունավետ մեթոդներ: Ավանդական մեթոդները էությունն հետևյալն է «Պատմիր ինձ և ես կմոռանամ» կամ «Ցույց տուր և ես կհիշեմ», իսկ ժամանակակից սերնդի համար որպես մեթոդի հիմք կամ էություն պետք է լինի հետևյալ «Կատարի ինձ հետ ես կսովորեմ»[4]:

Դասի ժամանակ մեթոդի ընտրությունը գտնվում է ուսուցչի ձեռքում: Մեթոդի ընտրությունը կախված է՝

- Սովորողների ընդունակություններից կարողություններից, հմտություններից
- Սովորողների թվից
- Ուսուցչի մեթոդական գիտելիքներից

[4] Ուսումնառության ակտիվ մեթոդները, https://www.youtube.com/watch?v=0CEtxJgv4Ls, (մուտք՝ 20.10.2022)

- Դասի բնույթից
- Դասասենակի կահավորումից

Մեթոդի ճիշտ ընտրությունից էլ կախված է դասի հաջող ավարտը և վերջնաարդյունքին հասնելը:

Պատմության դասավանդումը պահանջում է բազմազանություն և փոփոխականություն՝ կրթական գործընթացի կազմակերպման ձևերի և մեթոդների մեջ, ինչպես նաև ուսուցչի և աշակերտների երկխոսություն և համագործակցություն: Պատմությունն այն առարկան է, որ աշակերտը սիրում է ուսուցչի խոսքով, որը պետք է գերի աշակերտին և տանի պատմության խորքերը:

Պատմության ուսումնասիրումը սկսվում է 6-րդ դասարանից և շարունակավում մինչև 12-րդ դասարան: Ըստ կրթական մակարդակների (միջնակարգ, ավագ) պատմության դասավանդումը կատարվում է տարբեր ձևերով հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

5-6-րդ դասարան. Այս տարիքի երեխաների մոտ ճանաչողական հետաքրքրությունը, վերացական մտածողությունը կայուն չէ: Դասավանդումը պետք է իրականացվի կենդանի ու գրավիչ, պարզ ու մատչելի ձևով, դեպքերի և իրադարձությունների ճիշտ հաջորդականությամբ:

7-9-րդ դասարան. Այս տարիքի սովորողների մոտ տարիքային առանձնահատկությամբ պայմանավորված մտածողությունը ավելի զարգացած է՝ ծանոթանալով հերոսի, արքայի, պատմական գործչի կերպարի հետ կարողանում է գիտակցել դրական կամ բացասականը, տեսակետեր առաջ բերելով մտահանգումներ են կատարում:

Ավագ դպրոցի աշակերտների մոտ պատմության նկատմամբ հետաքրքրությունը կարելի է ասել դառնում է ընտրովի, դա կախված է ընդունակությունների զարգացումից, քանի որ այս տարիքի սովորողները լիարժեք կարողանում են վերլուծել, հակադրել և համադրել, քննադատել և այլն:

Պատմության դասերը հետաքրքրի են անցնում, եթե կիրառվում են դասին համապատասխան մեթոդներ. Հնարներ, խաղեր, ինքնուրույն և ստաղծագործական աշխատանքներ:

Պատմության դասերին կարևոր է աշխատանք քարտեզների հետ, երբ աշակերտները ոչ թե սովորում են ոչ միայն պատրաստի քարտեզով, այլ երբ իրենք են գծում քարտեզ: Քարտեզի հետ կատարված աշխատանքը ավելի է հեշտացնում գիտելիք յուրացնելու գործընթացը: Դասի բնույթը և կառուցվածքը հաշվի առնելով քարտեզից բացի կիրառվում է դիագրամներ, Մ-ա ձև և Տ-ա ձև աղյուսակներ:

Աղյուսկաների լրացումը կարող է լինել և խմբային աշխատանքի ձևով և անհատական:

Կարելի է դասի տեսակները բաժանել 2 մասի՝

ԱՎԱՆԴԱԿԱՆ	ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ
1. նոր նյութի ուսումնասիրում	1.շրջագայության դաս
2.նոր գիտելիքի ձևավորում	2.դաս-խաղ
3.գիտելիքի համախմբում, ընդհանրացում և համակարգում	3.վիկտորինայի դաս
4.գիտելիքի ստուգում և գնահատում	4. Կինոյի դաս
5.համակցված դաս	5.դասի նախագիծ
	6.ինտեգրված դաս
	7.դաս բանավեճ
	Դաս քննարկում
	Դաս ճանապարհորդություն[5]:

Ըստ վեր նշված տեսակների մշակվել և կազմվել են նոր մեթոդներ՝ որոնք համապատասխանում են ժամանակակից դասի կազմակերպման չափանիշներին:

[5] Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլան կազմման գործընթացում, Երևան, 2014, էջ 1-3:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ: ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների համակարգ է, որն ապահովում է ուսուցման արդյունավետ գործունեության իրականացում: Դրանք ուսումնական գործընթացի անհրաժեշ բաղադրիչներն են, որոնք օգնում են իրագործել դիդակտիկական նպատակները: Մեթոդը իր մեջ ներառում է 3 կարևոր խնդիր՝

1 Ի՞նչ սովորեցնել

2.Ի՞նչու, ի՞նչի համար սովորեցնել

3.Ի՞նչպես սովորեցնել

Մեթոդների ճիշտ ընտրությունն և կիրառությունն պայմանավորված է մի շարգք գործոններով՝ Սովորողը պետք է

- հստակ իմանա ինչ է անում և ինչու
- Մշտապես տեղյայ լինի թե ուսուցիչը ինչ է ակնկալում իրենից
- Վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու և օգնելու է իրեն
- Ուսուցիչը պետք է կարողանա համադրել բազմազան մեթոդներ արդյունքների հետ:

Պայմանականորեն ուսուցման մեթոդները բաժանվում են 2 խմբի ավանդական և նոր կամ ժամանակակից: Ավանդական ՝պատրաստի գիտելիքի փոխանցում սովորողին և դրա վերարտադրումը նրա կողմից: Ժամանակակից՝ երբ աշակերտը գիտելիք ստանում է ինքնուրույն աշխատանքի միջոցով:

Համապատասխան դասի կառուցվածքի մեթոդները լինում են ՝

Խթանման փուլ՝ «Մտագրոհ, Խմբագրում, Պրիզմա, Ձնակույտ, Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր»:

Իմաստի ընկալման փուլ՝ Գաղափարների քարտեզ, Բանավեճ, Վեննի դիագրամ, 3 բանալի և մեկ կողպեք, Զբոսանք պատկերասրահում և այլն:

Կշռադատման փուլ- Քառաբաժան:[6]

[6] Թորոսյան Ա., Սեմինար Երևանի N198 ավագ դպրոցի ուսուցիչների համար, 2012, Սեմինար ``մեթոդ և հնար`` (slideshare.net) (մուտք՝ 24.10.2022)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. *«Պատմության առեղծվածի բացահայտում»*- սովորողներին հնարավորություն է տալիս ուշադիր լինել պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերին:

Սովորողների տվեք որևէ ժամանակաշրջանում գործող խուզարկուի դեր: Խմբերով կամ անհատական «Բացահայտեն» պատմական որևէ իրադարձության առեղծված: Ուսուցիչը ներկայացնում է իրադարձությունը որը պետք է «Բացահատել»:

Օրինակ. Բացահատեք Պապ թագավորի սպանությունը 374 թվականին: 7-րդ դասարան

Հարցեր

1. Որտե՞ղ սպանվեց Պապը: Որտեղի՞ց էր եկել Պապն այն քաղաք, ուր նրան սպանեցին: Ինչո՞ւ սպանեցին հենց այդ քաղաքում:

2.Շահագրգիռ ի՞նչ կողմեր կային Պապ թագավորի սպանության մեջ: Գտեք կասկածյալներին:

3.Ինչո՞ւ սպանեցին Պապ թագավորին:

2. *«Գտիր տարբերությունը» կամ «Պատմական կերպարները տարբեր ժամանակներում»*- Որպես դասի լավ սկիզբ կամ բոլորի հետ ընդհանուր աշխատանք սովորողներին ներկայացնում են տարբեր նկարներ և խնդրում նրանց գտնել տարբերություններ:

Օրինակ. Մեսրոպ Մաշտոցը տարբեր ժամանակներում: -7-րդ դասարան:

Ներկայացնում ենք Մեսրոպ Մաշտոցի պատկերումները տարբեր ժամանակներում: Եթե պատկերները ցուցադրվելու են լուսարձակիչով, յուրաքանչյուր նկարը 10-15 վայրկյան ցուցադրել , իսկ եթե թղթային տարբերակով են ցուցադրվելու ապա 1րոպե: Այդ ընթացքում աշակերտները գրի են առնում այն, ինչ նկատում են նկարներում:

Առաջին փուլում սովորողները կնկատեն մակերեսային տարբերություններ: Մեկ նկարում Մաշտոցը ավելի երիտասարդ է, մյուսում նայում է Աստծուն և այլն:

Երկրորդ փուլում ուսուցիչը հնարավորություն է տալիս նույն ժամանակով ևս մեկ անգամ դիտել նկարները: Այս անգամ նրանք գտնում են ավելի շատ մանրամասներ:

Օրինակ՝ նկատելի է որ Մաշտոցը և հայ գրերի գյուտը թեման տարբեր ժամանակների նկարիչների կողմից ավելի սրբացված է, այլ երանգներով է պատկերված:

Երրորդ փուլում քննարկում ենք հիմնական հարցերը.

- Ի՞նչ է փոխվում նկարներում:
- Ինչո՞ւ են տարբեր ժամանակներում Մեսրոպ Մաշտոցին պատկերել տարբեր ձևով:
- Ինչպե՞ս է փոխվել մարդկանց ընկալումները հայոց գրերի գյուտի թեմայի հանդեպ և այլն:

3. «Պատմությունն իրերի միջոցով» 5-6-րդ դասարան

Այս մեթոդը հնարավորություն է տալիս աշխատել պատմական աղբյուրի հետ, տարատեսակ իրերի հետ, կատարել վերլուծություն միջավայրրի և ժամանակաշրջանի վերաբերյալ:

Օրինակ՝ Դասի ընթացքում ուսումնասիրում են Արենիի քարանձավից գտնված հինավուրց կոշիկը, որի միջոցով պետք է պարզել՝ Արենիի շրջանում ապրող մարդիկ ինչ կենսագործունեություն են վարել՝ նստակայց, թե քոչվորական:

Հարցեր. Ի՞նչ նյութից է պատրաստված կոշիկը:

Ըստ պատրաստաման նյութի ինչ մասնագիտություն կառանձնացնեք:

4. *«Քարտեզի միջոցով ուղևորության վերլուծություն»* 8-րդ դասարան

Այս մեթոդի համար օգտակար է պատմական կոնկրետ կերպարի կամ խմբի ուղևորության ճանապարհն ուսումնասիրելու համար:

Որպես օգնություն ուսուցիչը տրամադրում է ուղևորության պատկերային վկայություններ կամ պատմիչների նկարագրություններ:

Ինքնուրույն կամ սովորողների հետ միասին կազմում ենք ուղևորության ժամանակացույց:

Նշումները կարող են պատկերել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային քարրտեզների վրա/ օրինակ GOOGLE Earth/

Քննարկում-վերլուծում ենք ուղևորությունը:

Օրինակ. Հովսեփ Էմինի ուղևորությունը.

Ուղևորությունը Հնդկաստանից մինչև Եվրոպա, ապա Հայաստան, Վրաստան և վերադարձ Հնդկաստան: Ուսումնաօժանդակ գրականություն կարող են օգտվել «Հայազգի Հ. Էմինի կյանքն ու արկածները, որը ինքն է գրել անգլերեն լեզվով» գիրքը: Կարելի է իրականացնել խմբային աշխատանք: Ամբողջ անցած ճանապարհը բաժանվում է մասերի: Յուրաքանչյուր խումբ դառնում է իրեն բաժին ընկած ուղղու խորհրդատուն: Վերջում ներկայացվում է գիտական քարտեզ, որի հետ խմբերը համադրում են իրենց ստացած արդյունքները:

Ավարտին կարող եք քննարկել հետևյալ հարցերը՝

-Տվյալ ժամանակահատվածում ի՞նչ տրանսպորտային միջոցներ գիտեք կամ կառաջարկեիք:

Մոտավորապես որքա՞ն կտևեր այդպիսի ճանապարհորդությունը և որքա՞ն կտևեր, եթե այն իրականացնեիք մեր օրերում, ոչ ինքնաթիռով[7]:

«Խաթարված հերթականություն»

Այս մեթոդը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը, ուշադրության կենտրոնացմանը: Ուսուցիչը նախօրոք պատրաստում է թղթեր, որոնց վրա տեքստից գրում է կարևոր փաստեր, իրադարձություններ: Դրանք դնում է խառը հերթականությամբ:[8] Դասարանը 6-րդ, առարկա Համաշխարհային պատմություն

Օրինակ 1. գիտությունը՝ մարդկության անցած ուղին, ուսումնասիրող, պատմագիտությունն է:

Մարդկության անցած ուղին ուսումնասիրող գիտությունը՝ պատմագիտությունն է:

2.վաղ շրջան, մարդկության,քարի դարն է, պատմության :

Մարդկության պատմության վաղ շրջանը՝ քարի դարն է:

« Զարմանք, անսպասելիություն»

Աշակերտները սիրում են զարմանալ: Այդպիսի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Աշակերտների կողմից պատմական հերոսի, կերպարի դերը ստանձնելը[9]: Դասարանը- 8-րդ դասարան, առարկա Հայոց պատմություն

---

[7] Գիրք Պատմության ուսուցման. Ինչո՞ւ, Ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020, էջ 59:

[8] Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, Երևան, 2020, էջ 24:

[9] Նույն տեղում, էջ 41:

Պատկերացրեք դուք Մխիթար Սպարապետն եք: Ինչպե՞ս կվարվեիք:

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿ

Առարկա- Համաշխարահային պատմություն

Դասարան 8-րդ

Դասարանում սովորողների թիվը 5

Տևողությունը 45 րոպե

Թեմա Արդյունաբերական զարգացման արդյունքները

Դասի նպատակը

Իմանալ՝

- Արդյունաբերական հասարակության շրջանում տեղի ունեցած կարևոր տեղաշարժերի, դրանց ընթացքի և հետևանքների մասին

Կարողանալ՝

- Պարզաբանել արդյունաբերական հասարակության շրջանում տեղի ունեցած տեղաշարժերի պատմական նշանակությունը
- Գնահատել և արժևորել հասարկաության կայնքում տեղի ունեցած փոփոխությունների դերն ու նշանակությունը
- Քննարկման, հարցադրումների միջոցով ամրապդնել ստացած գիտելիքները, պատկերացում կազմել կատարված գյուտերը, հայտնագործությունները և այլն

Հիմնական հասկացությունները

- Արդյունաբերական հասարակություն, բուրժուազիա, բանվոր դասակարգ, դաս և դասային արտոնություններ, օմնիբուս, հեռագրական ապարատ:

Ուսուցման միջոցներ, ուսումնադիտողական պարագաներ

- դասագիրք, տետր, աղյուսակներ, փաստաթուղթ, համակարգիչ կամ էլեկտրոնային գրատախտակ:

Դասի տիպ

- նոր նյութի հաղորդում

Ուսուցման մեթոդներ, հնարներ

Խոսքային, ցուցադրական, զրույց, աղյուսակ, հասկացությունների աղյուսակ

Դասի ընթացքը

Սկզբում ուսուցիչը հայտնում է նոր թեմայի վերնագիրը, հետո դասի նպատակը, հարցերի միձոցով գտնել հիմնական գաղափարը, այնուհետև գրատախտակին դասի մեջ տեղ գտած հասկացությունները և բացատրում, միևնույն ժամանակ հարցնելով նաև սովորողներին, իսկ նրանք պատասխանելուց զատ գրում են տետրերում: Դասարանը բաժանվում է խմբերի 3 և 2 հոգանոց: Ստանում հանձնարարություն ընթերցել դասագրքում գրված իրենց հատվածը: Նրանք ընթերցում են տեքստ կատարելով համապատասխան նշումներ հետևյալ հարցերի շուրջ՝

-Ի՞նչ նոր բան իմացաք հանձնարարված հատվածից:

-Կարևոր էր ձեր իմացածը: Ինչո՞ւ:

-Որո՞նք էին կարևոր առանցքային հասկացությունները:

Այնուհետև կազմակերպվում է քննարկում հարցերի շուրջ, յուրաքանչյուր խումբ կարդում և ներկայացնում իր նշումները, բացատրում և վերլուծում, ինչպես նաև պատասխամնում առաջացած հարցերին:

Այնուհետև լրացնում են Քառաբաժան աղյուսակը՝

տպավորությունները տեքստը կարդալիս

- կարևոր 2 բառ, գաղափար,
- զգացմունքներ տեքստը կարդալիս,
- տեքստի համառոտ ներկայցում սեփական բառերով:

Այս աշխատանքի ամփոփումից, վերլուծությունից, քննարկումից հետո կարելի է գնահատել և կատարել հետադարձ կապ: Գնահատման ձև կարելի է նախապես պատրաստել հարցաթերթ՝ կամ էլ գնահատման ռուբիկ օգտագործել:

Խմբային աշխատանքը / կազմակերպվածությունը

Ներկայացման ձև

Անհատական աշխատանքը

Վերլուծական աշխատանք

Հանձնարերել տանը գծել և լրացնել «Քաղաքը միջնադարում և նոր ժամանակներում աղյուսկը», ընթերցել լրացուցիչ նյութը և պատասխանել հարցերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ ցանկացած դաս-ուսուցում և մեթոդների, մոտեցումների կիրառում սովորողներին տալիս է գիտելիք: Հաշվի առնելով այն պահանջները, որ ժամանակակից կրթությունը դնում է իր առջև, ուսուցման կազմակերպման նորարական և արդյունավետ ձևերի որոնումը շատ արդիական է:

Մանկավարժական հետազոտությունների իրականացման գործընթացում, շատ կարևոր է մեթոդական գիտելիքների իմացությունը: Այդ ամենը ուսուցիչը ստանում է վերապատրաստումների, ինչպես նաև սեփական պրպտումների, սետղծագործական աշխատանքի արդյունքում:

Արդի մանակավարժական մեթոդների կիրառումը նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ աշակերտները դառնան ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են ինքնուրույն մտածող և ստեղծագործող:

Կարելի է ասել որ, ուսուցչի խելացի աշխատանքի արդյունքում դասավանման, ուսուցման գործընթացը հասնում է կատարելության, վերջնական իմաստի:

Հմուտ ուսուցչի ձեռքում է գտնվում մեթոդների ճիշտ ընտրությունը, որոնց ճիշտ օգտագործման արդյունքում է ուսուցումը դառնում որակյալ և արդյունավետ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլան կազմման գործընթացում, Երևան, 2014:
2. Գիրք Պատմության ուսուցման. Ինչո՞ւ, Ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020:
3. Թորոսյան Ա., Սեմինար Երևանի N198 ավագ դպրոցի ուսուցիչների համար, 2012, Սեմինար ``մեթոդ և հնար`` (slideshare.net) (մուտք՝ 24.10.2022)
4. Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմություն. Ուսուցչի ձեռնարկ 6-7 դասարան, Երևան 2013:
5. Ուսումնառության ակտիվ մեթոդները https://www.youtube.com/watch?v=0CEtxJgv4Ls, (մուտք՝ 20.10.2022)
6. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, Երևան, 2020, 73 էջ: